ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1548 05.06.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտք 3726
10 06 2015թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսիանի ՁՊՎ: Ուսումնասիրելով ՁՊՎ-ի համապատասխան գրանցամատյանները, Դիտորդական խմբի մոտ կասկած առաջացավ, որ Ժիրայր Պավլուշի Հարությունյանը 72 ժամից ավել է պահվել ՁՊՎ-ում ձերբակալվածի կարգավիճակով:

Դիտորդական խումբը վարչակազմից խնդրեց կասակածնքները փարատելու համար ներկայացնել համապատասխան հիմքերը՝ փաստացի անձին ազատությունից զրկելու և արգելանքից ազատ արձակելու վերաբերյալ:

Նշենք, որ վարչակազմը կտրականապես հրաժարվեց, որևէ հիմք (փաստաթուղթ) ներկայացնել նշված խնդրի վերաբերյալ, մեկնաբանելով, որ ունեն համապատասխան հանձնարարական որևէ փաստաթուղթ Դիտորդական խմբին չտրամադրելու մասին:

Ավելացնենք նաև, որ Դիտորդական խումբը ամեն կերպ բացատրեց, որ համապատասխան փաստաթղթերն են հանդիսանում (անձին բերման ենթարկելու, ձերբակալելու արձանագրություններ, անձին ձերբակալելու մասին որոշում, անձին արգելանքից ազատ արձակելու որոշում, դատավորի, դատախազի կամ քննիչի կողմից տրված որոշումներ, քննիչների կողմից ՁՊՎ-ի տարածքից դուրս քննչական գործողություններ կատարելու հայտեր) տվյալ բաժնի ՁՊՎ-ի հիմքերը, անձ ընդունելու , որևէ այլ հիմնարկ տեղափոխելու կամ ՁՊՎ-ի տարածքից դուրս այլ գործողություններ կատարելու համար և տվյալ փաստաթղթերը պետք է

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

...ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀ...
Մուտք № 2623
10 06 2015թ.

պահվեն ՀՊՎ-ում և հասանելի լինեն Դիտորդական խմբին բոլոր կասկածանքները չեզոքացնելու համար:

Ավելացնենք նաև, որ Դիտորդական խումբն էլ, ՀՀ ոստիկանության ամբողջ անձնակազմն էլ տեղյակ է, որ բոլոր գրանցամատյանները լրացվում են թերություններով, ջնջումներով և խախտումներով, որոնց վերաբերյալ Դիտորդական խումբը բազմիցս նշել է իր ընթացիկ հաշվետվություններում և ՀՊՎ-ների վարչակազմը բազմիցս նախազգուշացվել նման աշխատելաոճի համար:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և տալ մեկնաբանություն, դրա վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված
անձանց պահելու վայրերում վերահսկողություն
իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1972 << 16 >> 06 2015թ.

Ձեր 05.06.2015թ. թիվ 2621/1548 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ մայիսի 18-ին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված փաստը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ժ.Հարությունյանը ՀՀ ՔԿ Սիսիանի բաժնի քննիչի կողմից 25.02.2015թ. հրավիրվել է ոստիկանության Սիսիանի բաժին և ժամը 13.00-ին ձերբակալվել: 27.02.2015թ. Ժ.Հարությունյանը տեղափոխվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ դատավորի կողմից որոշում է կայացվել որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը 2 ամիս ժամկետով, սակայն թույլատրելի է եղել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման փոխարինումը գրավի դիմաց ազատ արձակելուն:

28.02.2015թ. ժամը 09.58-ին Ժ.Հարությունյանի հարազատների կողմից գրավը վճարելուց հետո ժամը 11.45-ին, քննիչի որոշումով նա ազատ է արձակվել:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ ՁՊՎ վարչակազմը կտրականապես հրաժարվել է ձերբակալված Ժ.Հարությունյանի վերաբերյալ դիտորդների խմբին որևէ հիմք ներկայացնել, ապա հայտնվում է, որ ՁՊՎ վարչակազմը ղեկավարվել է ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. 1-Ն հրամանի պահանջներով, այլ ոչ թե համապատասխան հանձնարարականով, և քանի որ դիտորդների խմբի կողմից պահանջված փաստաթղթերը համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի պահանջների գտնվում են ձերբակալվածի անձնական գործում, այդ իսկ պատճառով պահանջված փաստաթղթերը չեն տրամադրվել:

ՀՀ ոստիկանության շտաբ